

զարաններու, ձկնարաններու, օսլայի, թղթի, քիմիական նիւթերու, աղիքի գործարաններու մէջ աշխատողները ևլն։ :

Տաք մքնովորտի մէջ աշխատանք. — Հնոցներու առջև աշխատանքը վնասակար է այն պատճառով որ նախ շատ ծանր է ու յոդնեցուցիչ ու յետոյ չափազանց քրտինք յառաջ կը բերէ ու կը տկարացնէ։ Ասկէ զատ գործաւորը պարտաւորուած է շարունակ շնչել հնոցէն եկած վնասակար կաղեր։

Այս պայմաններու մէջ աշխատող գործաւորները միշտ ծարաւի են, շատ կը խմեն, գլխաւորաբար ոգելից ըմպելիներ՝ իրենց ծարաւը յաղեցնելու և իրը թէ ուժ ստանալու համար։ Միւս կողմէ աշխատանքի պահուն օդի հոսանքներուն ենթարկուելով, կամ տաք միջավայրէն դուրս եկած ատեն, դիւրաւ պաղ կ'առնեն՝ եթէ լաւ պաշտպանուած չեն ցուրտին դէմ և կ'ունենան յօդային և ջղային ցաւեր, կուրծքի բորբոքումներ, ջերմութիւն, նիհարութիւն և ընդհանուր սպառում։

Այսպէս են օր՝ երկաթի, պղինձի, թիթեղի գործարաններուն մէջ մետաղ հալեցնող գործաւորները (fondeurs), երկաթագործները, կունողները (lamineurs), հացագործները, մեքենավարները, ապակիի գործարաններու, ինչպէս նաև հնոցներու առջև աշխատողները։

Պաղ օդի մէջ աշխատանքը. — Հանգերու, նկուղներու, սառոյցի գործարաններու, ինչպէս նաև մսի պահածոյի սառնարաններու (frigorificque) մէջ աշխատողները, նթակայ են յօդերու և ջղային ցաւերու. ձեռքերն ու ոտքերը կը թմրին, ձմեռնակ կ'ունենան ևլն։ Այսու հանգերձ ինպէս լսինք, պաղ և խոնաւ տեղի մէջ աշխատանքը նուազ վնասակար է առողջութեան քան տաք և խոնաւ միջավայրի մէջ աշխատանքը։

Խտացած օդի և անօրացած օդի մէջ աշխատանքը կարող է որոշ տկարութիւններ կամ արկածներ պատճառել. սակայն միայն կը յէշենք ու կ'անցնինք, որովհետև չենք կարծեր որ մեր ազգակիցներէն այլպիսի գործերու մէջ — օրինակ ծովու տակ սուզողներ կամ քանի մը հազար մեթր օդին մէջ բարձրացողներ — աշխատողներ գտնուին։

ԲԺ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ամերիկայի կարգ մը գործարաններու մէջ աշխատանքի միջոցին, կէսօրէն առաջ և նախընթիրիքի պահութ գործաւորները զանազան ըմպելիներու փոխարէն միայն կար կը խմեն։ Փոքաց ցոյց տուած է որ անոնց մէջ նուազ իիւանդութիւն. կը պատահի և թէ աշխատութիւնը աւելի արդիւմաւր է։

Բանտարներ, միայն կար խմեցէք աշխատանքի պահուն։